

Տեղեկատվություններ կորոնավիրուսի (SARS-CoV-2) մասին

- Կորոնավիրուսը առաջացնում է վարակ, որը կարող է նպաստել այնպիսի ախտանշանների, ինչպիսիք են հազը, հարբուխը, կոկորդացավը, ջերմությունը և երբեմն նաև լուծը:
- Վարակվելուց հետո հիվանդության ախտանշանները կարող են հայտնվել մինչև 14 օր անց:
- Վարակումը մարդկանց մեծ մասի (80 %) համար, նեոարյալ երեխաներին, վտանգավոր չէ: Վարակված մարդկանց մի մասի մոտ վարակը առաջացնում է այնպիսի բարդություններ, ինչպես շնչառական դժվարություններ և թոքաբորբ: Մինչ այժմ մահերը հիմնականում տեղի են ունեցել այն հիվանդների մոտ, որոնք ավելի բարձր տարիքի են կամ նախկինում տառապել են խրոնիկ հիվանդություններով: Ներկա պահին պատվաստանյութ չկա: Հիվանդության բուժման համար դեռևս հատուկ բուժում գոյություն չունի:

Ինչպե՞ս է տարածվում կորոնավիրուսը

- Կորոնավիրուսը կարող է փոխանցվել մեկ անձից մյուսին: Փոխանցման հիմնական ուղին կաթիլային վարակն է: Դա կարող է տեղի ունենալ ուղղակիորեն շնչառական լորձաթաղանթների միջոցով կամ անուղղակիորեն՝ ձեռքերով, որոնք այնուհետև կպնուն են բերանի կամ քթի լորձաթաղանթին և աչկի շողկապներին:
- Վտանգված են այն մարդիկ, ովքեր վերջին 14 օրում գտնվել են Հյուսիսային Իտալիայում կամ Իրանում:

Ինչպե՞ս կարելի է խուսափել կորոնավիրուսի փոխանցումից

- Հազալու կամ փռոտալու ժամանակ առավելագույն հեռավորություն պահեք – ավելի լավ թեքվեք: Փռոտալուց թևով կամ թաշկինակով, որը այնուհետև կթափեք, ծածկեք Ձեր բերանը:
- Ձեռքերը դեմքից հեռու պահեք, խուսափեք Ձեր բերանին, աչքերին կամ քթին կպնել:
- Խուսափեք ֆիզիկական կոնտակտից, երբ այլ մարդկանց եք ողջունում: Լվացեք Ձեր ձեռքերը հաճախ և մանրակրկիտ,՝ առնվազն 20 վայրկյան՝ ջրով և օձառով:
- Բացի այդ, Կորոնավիրուսի հայտնաբերման նպատակով, բոլոր նոր ժամանած անձիք ստուգվելու են բուժկետում: Խնդրում ենք նաև տեղեկացնել բուժկետին, թե որ երկրներում եք եղել անցած 14 օրվա ընթացքում:

Ինչպե՞ս վարվել ախտանշանների դեպքում

- Եթե նկատել եք ախտանշաններ ինչպիսիք են հազ, հարբուխ, կոկորդացավ և ջերմություն, ապա դիմեք բուժկետ (Notarzt-Börse).

Նոյմյունստեր. Ժամը 8:00-ից մինչև 12:00-ը և 13:00-ից մինչև 18:00-ը՝ 3-րդ շենքում
Բոշտեդ. Ժամը 8:00-ից մինչև 12:00-ը և 13:00-ից մինչև 16:00-ը Ֆ1Ա (F1A) շենքում
Ռենգբուրգ. Ժամը 8:00-ից մինչև 12:00-ը և 13:00-ից մինչև 16:00-ը՝ 27-րդ շենքում

Եթե բուժկետը արդեն փակ կլինի, խնդրում ենք վերադառնալ հաջորդ օրը: Վերոնշյալ ախտանշանների պատճառով անհրաժեշտ չե գիշերը գնալ հիվանդանոց կամ շտապօգնություն կանչել:

- Եթե հիմնավոր կասկածներ առաջանան, ապա խնդրում ենք մնալ միայն Ձեզ հատկացրած սենյակներում, մինչև այլ տեղեկատվություն չստանաք: Խնդրում ենք հետևել նշված հրահանգներին: Ձեզ այնտեղ ամեն-ինչ կտրամադրվի, ինչ որ անհրաժեշտ է:

Ամեն դեպքում հանգիստ և ողջախոհ եղեք: Այլ հարցերի դեպքում դիմեք բուժկետ, (DRK) ԴՌԿ կամ (Johanniter) Յոհանիտեր կազմակերպություններ: